

ԱՇՔԵՆԱԶԻ ՌԱԲՈՒՆԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Կիրակի կեսօրէ ետք, Յունուար 22, 2006-ին, Աշքենազի Ռաբունապետ Եօնայ Մէցկէր, և Քնէսէթի Անդամ, Եուդի Շթէռն, այցելեցին Երուսաղէմի հայ Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկեանին: Հիւրասիրութեան ներկայ էին նաև՝ Պատրիարքարանի Միջ-Եկեղեցական և Օտար Յարաբերութիւններու Վարիչ Տ. Արիս եպս. Շիրվանեանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Տ. Ներսէս արք. Պօղոսեանը: Վերջինս յարգարժան հիւրերուն ծանօթացած էր երբ 2005-ին այց էին տուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

«Մինչ Հայաստան կը գտնուէինք, անդրադարձայ թէ մեր երկիրները, Իսրայէլն ու Հայաստանը, որչափ նման են իրարու և թէ մեր երկու ազգերու սփռուած գաղութները որչափ կապուած են իրենց հայրենիքներուն: Վերջին հարիւր տարիներու ընթացքին մեր երկու ժողովուրդներն ալ շատ են տառապած», ըսաւ Ռաբունապետը. «Ցեղասպանութեան Յուշարձանին այցելութիւննիս խորին յուզմունք պատճառեց, այնքան որ մեր թարգմանը արտասուելով չկարողացաւ շարունակել իր թարգմանութիւնը»:

Պատրիարք Սրբազան Հայրը յայտնեց թէ երբ այցելած էր Երուսաղէմի Եատ Վաշէմ Հրէական Ցեղասպանութեան Թանգարանը, ուժգնապէս տպաւորուած էր, մանաւանդ տեսնելով նկարը երեխայի մը որ, ձեռքերը վերամբարձ, նայուածքով կը հարցնէ թէ ի՞նչ կրնայ եղած ըլլալ իր յանցանքը: «Ամէն մէկ նկարի կողքին, կարելի է Եբրայերէն բացատրութեան քով դնել նոյնը Հայերէնով», ըսաւ ան: Ապա, շարունակեց՝ շեշտելով վերապրելու կամքը հայ ազգին, որ տասնեօթ դարերու տագնապալի զոհողութեամբ պահպանած է իր Քրիստոնեական հաւատքը:

Ի պատասխան Արիս Սրբազանի հարցումին թէ՝ ի՞նչպէս կարելի է ստանալ Հրէաստանի պետական ճանաչումը Հայոց ցեղասպանութեան՝ հարցը ներկայացնելով Քնէսէթին, Տիար Շթէռնը յայտնեց թէ՝ Ծիծեռնակաբերդի Յուշարձանի այցելութեան ընթացքին, Ռաբունապետը արտասանած է այն յատուկ Եբրայերէն թաղման աղօթքը որ կ'ըսուի յիշատակելու հրէաներու ողջակէզը, նաև յիշելով 1915-ի Հայ զոհերը: «Պէտք է շարունակենք մեր աշխատանքը այս ուղղութեամբ», շեշտեց Տիար Շթէռնը. «Մեզ համար բարոյական պարտականութիւն է»:

Ռաբունապետը Պատրիարք Սրբազանին նուիրեց խմբանկար մը, լուսանկարուած Հայաստանի Վարչապետին գրասենեակին մէջ, և Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ միասին: Հիւրերուն նուիրուեցաւ հրէայ հեղինակ Եաիր Օռոնի՝ Անտեղի Ուրացում. Իսրայէլը և Հայոց ցեղասպանութիւնը, (Yair Auron. The Banality of Denial: Israel and the Armenian Genocide), Եբրայերէն լեզուով գիրքը:

ՂԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ